Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

26 (1425) • 19 հուլիսի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

02 Շաբաթաթերթ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Հարգանքի տուրք ՊՊԾ գնդում

Երեք տարի առաջ, հուլիսի 17-ին, զինված անձանց խումբը խուժեց ոստիկանության պարեկապահակետային ծառայության գնդի տարածք: Իրենց ծառայողական ու պրոֆեսիոնալ պարտքը կատարելիս զոհվեցին, վիրավորվեցին, պատանդառվեցին ոստիկանության ծառայողներ:

Ողբերգությունից մեկ տարի անց հուշակոթող ու հուշատախտակ բացվեց պարեկապահակետային ծառայության գնդում՝ հավերժացնելով դավադիր գնդակից զոհված ոստիկանության գնդապետ Արթուր Վանոյանի, ոստիկանության լեյտենանտ Յուրի Տեփանոսյանի, ոստիկանության ավագ ենթասպա Գագիկ Մկրտչյանի անունները:

Հուլիսի 17-ին, ավանդույթի համաձայն, ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-մայոր Վալերիյ Օսիպյանն ու ոստիկանության ղեկավար կազմը այցելեցին պարեկապահակետային ծառայության գունդ:

Ոստիկանության պետը, բարձրաստիճան սպաները, գնդի անձնակազմն ու զոհված ոստիկանների հարազատները ծաղիկներ խոնարհեցին ՊՊԾ գնդում զոհված ոստիկանների հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

Առավոտից ոստիկանության պարեկապահակետային ծառայության գունդ էին այցելում նաեւ պարզապես քաղաքացիներ, որ եկել էին երախտագիտության տուրք մատուցելու իրենց անվտանգությունն ու ապահովությունը կյանքի գնով պաշտպանած ոստիկանների պայծառ հիշատակին եւ հավաստելու հետայսու այսպիսի ողբերգությունները բացառելու համաժողովրդական կամքը:

Աշխատանքային խորհրդակցություն

Հուլիսի 13-ին ոստիկանությունում տեղի ունեցավ աշխատանքային խորհրդակցություն, որը վարում էր ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-մայոր Վալերիյ Օսիպյանը: Մասնակցում էին ոստիկանության պետի տեղակալները, կենտրոնական ապարատի, մարզային ու տարածքային ստորաբաժանումների ղեկավարներ եւ բարեխիղճ ծառայությամբ աչքի ընկած ոստիկաններ:

Ողջունելով ներկաներին՝ Վալերիյ Օսիպյանը շնորհավորեց տարբեր ծանրության հանցագործություններ բացահայտելու համար պարգեւատրման ներկայացած ոստիկաններին, ինչից հետո նրանք արժանացան դրամական պարգեւների:

Ոստիկանության պետը նկատեց, որ աշխատանքի արդյունավետության հետեւողական բարձրացման խթաններից մեկն էլ պարգեւատրումների մեխանիզմն է, որը թույլ է տալիս օբյեկտիվ եւ առարկայական գնահատել լավագույն ծառայողներին: Հավաստելով, որ ոստիկանները բացի իրենց հասանելիք աշխատավարձից, շարունակելու են ըստ արժանվույն գնահատվել նաեւ կոնկրետ հանցագործություններ բացահայտելու համար, Վալերիյ Օսիպյանն ընդգծեց. «Գնահատվելը ոստիկաններին պետք է պարտավորեցնի էլ ավելի բարեխիղճ ծառայել»:

Խորհրդակցության ընթացքում քննարկվեցին ոստիկանության օպերատիվ-ծառայողական գործունեությանը վերաբերող այլ հարցեր եւս: Վալերիյ Օսիպյանը նշեց, որ արդյունքները գոհացուցիչ են, սակայն անհրաժեշտ է անել ավելին՝ ներդնելով բոլոր միջոցներն ու կարողությունները, քանզի հանրությունը ոստիկանությունից ոչ միայն պարզապես արդյունավետ, այլեւ մշտապես կատարելագործվող ծառայություն է ակնկալում:

Աշխատանքային խորհրդակցության ավարտին ոստիկանության պետը կոնկրետ ցուցումներ եւ հանձնարարականներ տվեց բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին:

Աննախադեպ ուժեղացված ծառայություն

Հուլիսի 14-ին ճանապարհային ոստիկանությունն աննախադեպ ուժեղացված ծառայություն իրականացրեց Երեւան-Սեւան ավտոճանապարհին:

Ոստիկանության պետի հանձնարարությամբ՝ ճանապարհային ոստիկանությունը ուժեղացված ծառայությանը ներգրավվել էր նաեւ «Արմենիան Հելիքոփտերս» կազմակերպության ուղղաթիռը:

Ուղղաթիռից ճանապարհի երթեւեկությանն ու ուժեղացված ծառայությանն էին հետեւում ճանապարհային ոստիկանության պետ Եգոր Կարապետյանն ու նրա տեղակալ Նորիկ Սարգսյանը:

Ուժեղացված ծառայության ընթացքում հայտնաբերվեցին բազմաթիվ օրինախախտ վարորդներ, որոնց նկատմամբ կազմվեցին վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ: Ոչ սթափ վիճակում գտնվող, միտումնավոր խախտումներ կատարող, երթեւեկության մյուս մասնակիցների նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորող վարորդների մեքենաները տեղափոխվեցին ճանապարհային ոստիկանության պահպանվող տարածք:

Ոստիկանության ու «Արմենիան Հելիքոփտերս» կազմակերպության համագործակցության շրջանակում ուղղաթիռներ կկիրառվեն ոչ միայն ճանապարհային ոստիկանության ծառայության, այլեւ ոստիկանության այլ միջոցառումների ընթացքում:

Հուլիս-օգոստոս ամիսներին սպասվում է հովեկների մեծ հոսք դեպի Սեւանա լիճ: Քաղաքացիների անվտանգ հանգիստը ապահովելու նպատակով «Արմենիան Հելիքոփտերս» կազմակերպության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել այդ ժամանակահատվածում ուղղաթիռներ ներգրավել ոստիկանության ուժեղացված ծառայությունների ընթացքում:

Սյունիքի ոստիկանների բացահայտումը

Հուլիսի 13-ին հիվանդանոցից ոստիկանության Գորիսի բաժին ահազանգեցին, որ հրազենային վնասվածքներով հիվանդանոց են տեղափոխվել Խնձորեսկում ապրող երկու եղբայր:

Հանցագործությունը բացահայտելու նպատակով ոստիկանության Սյունիքի մարզային վարչության ու Գորիսի բաժնի, ինչպես եւ այլ տարածքային ստորաբաժանումների ծառայողներից օպերատիվ խմբեր ձեւավորվեցին, որոնք սկսեցին ծավալուն հետախուզական միջոցառումներ: Շուտով հայտնի դարձավ, որ դեպքը տեղի էր ունեցել Գորիսից Խնձորեսկ տանող ճանապարհին: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվեցին 9 մմ տրամաչափի պարկուճներ: Ոստիկանները կարճ ժամանակում պարզեցին մի շարք հանգամանքներ եւ մի խումբ անձանց բերման ենթարկեցին Գորիսի բաժին:

Նախնական տվյալներով՝ հիվանդանոց տեղափոխված անձանց եւ Սյունիքի մարզի մի բնակչի միջեւ փոխհրաձգություն էր եղել, ինչի հետեւանքով էլ նրանք վնասվածքներ էին ստացել, վնասվել էր նաեւ մյուս կողմի մեքենան:

Բացատրական աշխատանքի արդյունքում կասկածյալը ներկայացավ դեպքի նախաքննությունը վարող մարմին՝ հետը բերելով «Սայգա» տեսակի հրազեն:

Կատարվում է նախաքննություն:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը հայտարարում է բակալավրի կրթական ծրագրով առկա վճարովի ուսուցման՝ 2019/2020 ուստարվա ընդունելություն

Շրջանավարտներին շնորհվում է իրավագիտության բակալավրի աստիճան եւ տրվում պետական նմուշի դիպլոմ: Ուսման տեւողությունը 4 տարի է:

Ընդունելության կարգին եւ պայմաններին կարող եք ծանոթանալ ոստիկանության www.police.am կամ կրթահամալիրի www.edupolice.am կայքերում:

Դանակահարություն Երեւանում

Վիճաբանության ժամանակ տղամարդուն դանակահարել էր հաջորդ օրը հիվանդանոց դիմած երիտասարդը:

էջ 2

Երթեւեկության «խոցելիները»

Ճանապարհատրանսպորտային վթարների հետեւանքով զոհվածներից յուրաքանչյուր երրորդը հետիոտն է:

էջ 3

Հանցագործությունները բացահայտվեցին

Խրախճանքի վայրից դուրս գալով՝ սկսել էին կյանքի կոչել նախապես ծրագրած գողությունները:

էջ 7

Տարվա լավագույն փորձագետը

Ոստիկանության Արտաշատի բաժնում կողոպուտի վերաբերյալ ահազանգ էր ստացվել: Անհայտ անձը մտել էր դեղատուն, հափշտակել դրամարկղի փողն ու փախել: Դեպքի վայրն առնվել էր պահպանության. ոստիկանության Արարատի մարզային վարչության փորձաքրեագիտական խմբի փորձագետի միջամտության անհրաժեշտություն կար:

Դեպքի վայր է շտապում ոստիկանության Արարատի մարզային վարչության փորձաքրեագիտական խմբի հատկապես կարեւոր հանձնարարություններով ավագ փորձագետ, ոստիկանության մայոր Արմեն Նազարյանը՝ 2018 թվականի ոստիկանության լավագույն փորձագետը...

Արմեն Նազարյանը 2008-ին ավարտել է ոստիկանության ակադեմիան եւ, որպես փորձագետ ծառայության անցել ոստիկանության Արարատի մարզային վարչությունում: 2014-ին նշանակվել է մարզային վարչության փորձաքրեակագիտական խմբի ավագ փորձագետի պաշտոնին, 2018-ից նույն ստորաբաժանման հատկապես կարեւոր հանձնարարություններով ավագ փորձագետն է:

Գործընկերների խոսքով՝ մասնագիտական հարուստ գիտելիքներով ու հետազոտությունների մեծ փորձով մասնագետ է, կարողանում է վերականգնել տեղի ունեցածի հանգամանքները՝ լուռ ու առանց հարցերի:

Արմեն Նազարյանն ունի իր աշխատանքային սկզբունքները, որոնցով առաջնորդվել է 11-ամյա ծառայության ընթացքում: Առաջինը՝ դեպքի վայրի պահպանությունն է: Նախքան իր հասնելը ոչ մի կողմնակի անձ չպետք է մտնի դեպքի վայր, քանի որ առաջին հայացքից անկարեւոր թվացող յուրաքանչյուր առարկա, փորձագետի համար կարող է լինել անփոխարինելի եւ հույժ կարեւոր նմուշ: Երկրորդ կարեւոր սկզբունքը՝ հանցագործության կատարման վայրը, մեթոդը եւ առարկան պարզելուց հետո դեպքի վայրից հավաքել նույնականացման համար պիտանի իրեղեն ապացույցներ եւ առավելագույնս անվնաս տեղափոխել՝ փորձաքննությունների եւ նույնականացման գործողությունների համար: Օրինակ, ոստիկանության Արարատի մարզային վարչության իր աշխատասենյակում Արմեն Նազարյանը վերցնում է դեղատանը կողոպուտ կատարելու կասկածանքով բերման ենթարկվածի մատնահետքերի նմուշները: Դրանց եւ դեպքի վայրից վերցրածների նույնականացման փորձաքննությունից հետո նա կտա եզրակացություն, եւ գուցե արձանագրվի լավագույն փորձագետի բացահայտած հերթական հանցագործությունը:

«Կարեւոր հատկանիշը, որ պետք է ունենա յուրաքանչյուր փորձագետ, պատասխանատվության բարձր զգացումն է: Փորձագետը հավասար պատասխանատվությամբ պետք է վերաբերվի յուրաքանչյուր դեպքի՝ անկախ դրա ծանրությունից, կատարման եղանակից ու հետեւանքներից»,- ասում է Արմեն Նազարյանը:

Բացի բանիմաց եւ լավ ծառայող լինելուց, Արմեն Նազարյանը նաեւ անփոխարինելի ընկեր է: Այդպես են նրան բնութագրում ծառայության ընթացքում բազմաթիվ փորձություններ միասին հաղթահարած գործընկերները:

Արարատի մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ Արմեն Գասպարյանի խոսքով՝ մայոր Արմեն Նազարյանն առանձնահատուկ ծառայող է: Բացի մասնագիտական բարձր պատրաստվածություն ունենալը, նաեւ օրինակելի սպա է՝ սպային բնութագրող լավագույն հատկանիշներով:

Բարին մաղթենք 2018 թվականի ոստիկանության լավագույն փորձագետին:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Դանակահարություն Երեւանում

Հուլիսի 11-ին, ժամը 3.25-ին, «Էրեբունի» բժշկական կենտրոնից ոստիկանություն հաղորդում էր ստացվել, որ կրծքվանդակի եւ որովայնի կտրած-ծակած վերքերով բուժօգնության է դիմել 42-ամյա մի տղամարդ: Նա հիվանդանոցում հայտնել էր, որ վնասվածքները ստացել է Աթոյան փողոցում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ:

Հուլիսի 12-ին, ժամը 00.50-ին, բժշկական կենտրոնից ոստիկանություն եւս մի հաղորդում ստացվեց, որ կտրած-պատռած վերքերով բուժօգնության է դիմել մեկ այլ քաղաքացի, որը հայտնել է, որ վնասվածքները ստացել է հուլիսի 11-ին՝ նշված փողոցում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության եւ Էրեբունու բաժնի ծառայողների համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ տեղեկություններ ստացվեցին, որ նշված վիճաբանության ժամանակ 42-ամյա տղամարդուն դանակահարել էր հաջորդ օրը հիվանդանոց դիմած Երեւանի 31-ամյա բնակիչը: Նա բացատրական աշխատանքի շնորհիվ ներկայացել է ոստիկանություն:

Կատարվում է նախաքննություն:

Դիմադրություն ոստիկաններին

Հուլիսի 13-ին ոստիկանության Աշտարակի բաժնի ծառայողները եւ Արագածոտնի մարզը սպասարկող ճանապարհային ոստիկանները ուժեղացված ծառայություն են իրականացրել Աշտարակ քաղաքում: Այդ ընթացքում ճանապարհային ոստիկանները կանգնեցրել են Երեւանյան խճուղով ընթացող «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի ավտոմեքենան: Ճանապարհային ոստիկանները նկատել են, որ մեքենայի վարորդն ու ուղեւորներից մեկը տեղերը փոխել են, եւ ուղեւորը ներկայացել է որպես վարորդ: Ճանապարհային ոստիկանները պահանջել են, որ իրական վարորդը ներկայացնի համապատասխան փաստաթղթեր: Այդ ընթացքում ուղեւորներից մեկն իջել է մեքենայից եւ վիճել ճանապարհային ոստիկանների հետ, չի ենթարկվել ոստիկանության ծառայողների օրինական պահանջներին եւ բռնություն է գործադրել նրանց նկատմամբ:

Միջադեպի վայր եկած Աշտարակի բաժնի ծառայողները եւ ճանապարհային ոստիկանները այդ տղամարդուն եւ մեքենայի իրական վարորդին բերման են ենթարկել ոստիկանության Աշտարակի բաժին:

Հարուցվել է քրեական գործ: Ստուգվել է մեքենայի վարորդի սթափության աստիճանը. նա ալկոհոլի ազդեցության տակ է եղել:

Ութ տարի թրաֆիքինգի էր ենթարկվել

Ոստիկանության Արտաշատի բաժնի համայնքային ոստիկանը տեղեկություն էր ստացել, որ Շիրակի մարզի Մարմաշեն գյուղում երիտասարդ մի աղջիկ ենթարկվում է աշխատանքային շահագործման:

Ըստ տեղեկությունների՝ աղջիկը գյուղի բնակիչներից մեկի կողմից աշխատանքային շահագործման է ենթարկվում 2011 թվականից: Տղամարդը, աղջկա նկատմամբ պարբերաբար բռնություն գործադրելով, կամ գործադրելու սպառնալիքով, հարկադրաբար պահում է գոմում եւ առանց որեւէ վճարի աշխատեցնում: Աղջիկը մի քանի անգամ փորձել էր փախչել, բայց շահագործման ենթարկած տղամարդը նրան գտել էր, բերել գոմ ու ծեծել՝ սպառնալով, որ կրկնվելու դեպքում կսպանի:

Հունիսի 18-ին աղջիկը կրկին փախել էր: Սարերով Ապարանի կողմ էր գնացել ու թաքնվել հովիվներից մեկի մոտ: Հենց այս տեղեկությունն էր ստացել համայնքային ոստիկանը, ինչից հետո համակարգի մի շարք ստորաբաժանումներ գործնական քայլեր ձեռնարկեցին՝ գտնելով աղջկան ու բացահայտելով նրա հետ տարիներ շարունակ կատարվածը:

Աղջիկը տեղափոխվեց Արտաշատի բաժին: Հրավիրվեցին նաեւ թրաֆիքինգի զոհերի աջակցությամբ զբաղվող «Հույս եւ օգնություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչները, որոնք աղջկան տեղափոխեցին ապաստարան:

Աղջիկը թրաֆիքինգի էր ենթարկվել այսպես ասած՝ դասական ձեւաչափով: Տղամարդը նախ աշխատավարձ էր խոստացել, սակայն չէր վճարել: Ընթացքում, եթե կենդանի էր սատկել կամ վնասվել, կատարվածի մեղավոր էր համարել աղջկան ու չէր վճարել, նաեւ ծեծել էր: Օգտվել էր նրա վիճակի խոցելիությունից, ինչը պայմանավորված էր եղել նաեւ աղջկա անձը հաստատող որեւէ փաստաթուղթ չունենալու հանգամանքով:

Աղջիկը ոստիկաններին հայտնեց նաեւ, որ իրեն աշխատանքային շահագործման ենթարկած տղամարդը անձնագիր էր խոստացել եւ օգնել գտնելու մորը: Աղջկա հայտնելով՝ այս խոստումը եւս պատճառ էր հանդիսացել, որ համաձայնի աշխատել նրա ֆերմայում:

Աղջիկը հստակ չի հիշում, թե քանի տարեկան էր, երբ ազգականներից մեկն իրեն Վրաստանից բերել է Հայաստան ու հեռացել: Մենակ մնալով՝ ապրել է սարերում, աշխատել տարբեր անձանց մոտ, բայց շահագործման չի ենթարկվել: Դժոխքը սկսվել է 2011 թվականից: Հիմա, երբ ամեն ինչ հետեւում է, մի նպատակ ունի՝ վերադառնալ Վրաստան ու գտնել մորը:

Քրեական գործ է հարուցվել:

Գողությունը բացահայտվեց

Հունիսի 30-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում գողության վերաբերյալ հաղորդում էր ստացվել: Մաշտոցի պողոտայում գտնվող «Պոնչիկանոցի» աշխատակիցը հայտնել էր, որ լուսադեմին անհայտ անձինք կոտրել էին վաճառասրահի պատուհանի ապակին եւ գողացել հինգ արկղ քաղցրավենիք:

Հանցագործությունը բացահայտելու համար ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հուլիսի 1-ին Կենտրոնականի քրեական հետախույզները գողությունը կատարած անձի վերաբերյալ օպերատիվ տեղեկություններ ստացան: Շուտով Փարպեցու փողոցից, գողությունը կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեց 21-ամյա մի երիտասարդ, որը խոստովանական բացատրություն տվեց:

Քննությունը շարունակվում է:

Է. Ա.

Քրեական հետախույզների բացահայտումը



Հուլիսի 10-ին Նոր Նորք վարչական շրջանում բնակարանային գողության դեպք արձանագրվեց: Բորյան փողոցի տներից մեկից հափշտակվել էին ոսկյա զարդեր. տուժողին պատճառվել էր 900 հազար դրամի վնաս:

Նոր Նորքի քրեական հետախույզները օպերատիվ միջոցառումների արդյունքում պարզեցին ոչ միայն կատարվածի հանգամանքները, այլեւ հանցագործությունը կատարած անձի ինքնությունը:

Էջմիածնում ապրող 23-ամյա երիտասարդը հայտնաբերվեց հուլիսի 13-ին եւ մայրաքաղաքի առեւտրի կենտրոններից մեկից կասկածանքով բերման ենթարկվեց ոստիկանության Նոր Նորքի բաժին: Երիտասարդը խոստովանել է կատարածը:

Կատարվում է քննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Գողության հեղինակը կին էր

Մարտի 7-ին ոստիկանության Էրեբունու բաժնում բնակարանային գողության դեպք էր արձանագրվել: Աթոյան փողոցի տներից մեկից հեռախոս էին գողացել: Տանտերը կարճ ժամանակով բացակայել էր տնից՝ դուռը բաց թողնելով: Այդ ընթացքում ինչ-որ մեկը մտել ու գողացել էր խոհանոցում դրված հեռախոսը:

Դեպքի առթիվ քրեական գործ հարուցվեց, որի շրջանակներում Էրեբունու ոստիկանները ձեռնարկեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ. գողությունը բացահայտվեց: Այն կատարելու կասկածանքով ոստիկանության Էրեբունու բաժին բերման ենթարկվեց 40-ամյա մի կին, որը նախկինում մի քանի անգամ դատապարտվել էր:

Կատարվում է նախաքննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Երթեւեկության «խոցելի հատվածները»

Երթեւեկության բոլոր մասնակիցները՝ վարորդները, հետիոտները, ուղեւորները, հեծանվորդները, հավասարապես պատասխանատու են երթեւեկության անվտանգության համար: Սակայն ձեւավորվել է մի անհասկանալի ավանդույթ, որ կանոնները խախտելու համար տուգանվում են միայն վարորդները, այնինչ վթարային իրավիճակների համար հաճախ մեղավոր են հենց հետիոտները: Շատերը ճանապարհը հատում են իրենց համար հարմար վայրում, ոչ թե հետիոտնային անցումներով: Վերջին տարիներին, համենայնդեպս՝ մայրաքաղաքում, էապես ավելացել է վերգետնյա ու ստորգետնյա անցումների քանակը, բայց չի ավելացել դրանցից օգտվողների թիվը: Երթեւեկության կանոնները խախտելը ոչ միայն վարչական իրավախախտում է, այլեւ՝ էթիկայի նորմերի խախտում, եւ եթե այլ բնագավառներում էթիկայի նորմերի պահպանումն ընդամենը բարեկրթության նշան է, ապա երթեւեկության դեպքում նժարի վրա ոչ թե բարոյական արժեքներն են, այլ սեփական անվտանգությունը:

Վիճակագրությունը փաստում է, որ երթեւեկության ամենախոցելի մասնակիցը հետիոտնն է. առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքով զոհվածներից յուրաքանչյուր երրորդը հետիոտն է եղել: Ճանապարհներին ամենաանկանխատեսելին հենց երթեւեկության այս մասնակիցներն են. հետիոտները կարող են հանկարծակի հայտնվել ճանապարհին, դադարեցնել ճանապարհի հատումը եւ վերադառնալ, վազել կամ կանգնել փողոցի կենտրոնում, եւ շատ դեպքերում վարորդների համար դժվար է կանխատեսել, թե մեկ վայրկյան անց հետիոտնը ինչ գործողություն կձեռնարկի. այս առումով հատկապես վտանգավոր են տարեցներն ու երեխաները:

Վրաերթերից խուսափելու նպատակով՝ մեկ-երկու պարզ խորհուրդ հետիոտներին:

Ճանապարհը հատեք միայն դրա համար նախատեսված վայրերում, հիշեք, որ ամենաանվտանգը ստորգետնյա եւ վերգետնյա անցումներն են, եւ օգտվեք դրանցից, եթե նույնիսկ ստիպված եք մի քանի մետր ավելի ճանապարհ անցնել:

Երթեւեկության գոտին հատելիս առավելագույն ուշադրություն եւ զգոնություն ցուցաբերեք. խորհուրդ չի տրվում քայլել կայանված մեքենաների արանքներով, ցանկալի չէ խցանումների ժամանակ մեքենաների դանդաղ ընթացքից կամ ժամանակավոր կայանելուց օգտվել ու հատել փողոցը, քանի որ խցանումների ժամանակ վարորդները, որպես կանոն, առավել ագրեսիվ պահվածք են ունենում:

Ներկայացնենք հունիս ամսին արձանագրված վրաերթերի մի քանի դեպք:

Հունիսի 4-ին Վայոց ձորի մարզի Ռինդ գյուղում «Օպել Աստրա»-ի վարորդը վրաերթի է ենթարկել 5-ամյա տղայի, որը մարմնական ծանր վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց: Նույն օրը Երեւանի Այվազովսկու փողոցում «ԿԻԱ» մակնիշի մեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել ճանապարհը ոչ հետիոտնային անցումով հատող 23-ամյա երիտասարդի: Մայիսի 9-ի եւ Մանանդյան փողոցների խաչմերուկում վրաերթի ենթարկված 56-ամյա տղամարդը նույնպես անտեսել էր հետիոտնային անցումը:

Հունիսի 10-ին Ստեփանավան քաղաքում «Մերսեդես» մակնիշի մեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 5-ամյա տղայի, իսկ մայրաքաղաքի Միկոյան փողոցում «Ֆորդ» մակնիշի մեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 84-ամյա տղամարդու, որը հիվանդանոցում մահացել է:

Հունիսի 17-ին «Մերսեդես» մակնիշի մեքենայի վարորդը Բաղրամյան պողոտայում վրաերթի է ենթարկել ճանապարհը ոչ հետիոտնային անցումով հատող 22-ամյա երիտասարդի: Հունիսի 19-ին, կեսգիշերին, մայրաքաղաքի 9. Անդրանիկի փողոցում «ԲՄՎ» մակնիշի մեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 18-ամյա երկու երիտասարդների, որոնք փողոցը հատում էին ոչ հետիոտնային անցումով: 16 եւ 17 տարեկան երկու պատանիներ էլ վրաերթի են ենթարկվել Թբիլիսյան խճուղում. դարձյալ փողոցը հատում էին ոչ հետիոտնային անցումով: Նույն օրը մայրաքաղաքի Գյուրջյան փողոցում վրաերթի ենթարկված 86-ամյա տղամարդը հիվանդանոցում մահացավ:

Որպես ամփոփում. պահպանեք երթեւեկության կանոնները՝ պահպանելով մեր կյանքն ու առողջությունը:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Բնակարանային գողությունը բացահայտվեց



Մարտի 18-ին ոստիկանության Հրազդանի բաժնում բնակարանային գողության վերաբերյալ հաղորդում էր ստացվել: Ինչ-որ մեկը բացել էր Հրազդանի Մաքրավան թաղամասի առանձնատներից մեկի պատուհանի մետաղյա շերտավարագույրը, ապա տեխնիկական միջոցների գործադրմամբ՝ պատուհանը, եւ գողացել վեց հեռուստացույց, հաղորդիչներ ու նարդի:

Դեպքի առթիվ տարածքային նախաքննական մարմնում քրեական գործ հարուցվեց, որի շրջանակներում Հրազդանի քրեական հետախույզները ձեռնարկված միջոցառումներով պարզեցին կատարվածի մի շարք հանգամանքներ: Նրանց տեսադաշտում հայտնվեցին Մաքրավան թաղամասում ապրող երկու երիտասարդներ:

Կասկածյալները հուլիսի 9-ին հայտնաբերվեցին ու բերման ենթարկվեցին ոստիկանության Հրազդանի բաժին, ապա ներկայացվեցին դեպքի նախաքննությունը վարող քննչական բաժին:

Հետագա միջոցառումներով իրավապահները հայտնաբերեցին գողոնի մի մասը, մյուս մասը հայտնաբերելու միջոցառումները շարունակվում են:

Կատարվում է նախաքննություն:

Հայտնաբերվածը սուբուտեքս էր

Օպերատիվ-հետախուզական տարաբնույթ միջոցառումների արդյունքում ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի ծառայողները ապօրինի թմրաշրջանառության մասին հերթական օպերատիվ տվյալները ստացան: Ըստ տեղեկությունների՝ Երեւանի բնակիչ, 47-ամյա մի տղամարդ ապօրինի թմրամիջոց էր իրացնում, մասնավորապես՝ սուբուտեքս: Տղամարդը վերցվեց ոստիկանների օպերատիվ տեսադաշտ: Կազմակերպվեցին դարանակալումներ: Քրեական հետախույզները հետեւեցին նրա շարժին:

Հուլիսի 4-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախույզները, Քանաքեռ-Զեյթունի բաժնի գործընկերների հետ, տղամարդուն, մեքենայով հանդերձ, մայրաքաղաքի Երզնկյան փողոցից բերման ենթարկեցին: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց սուբուտեքսի երեք հաբ: Տարածքային նախաքննական մարմնում հարուցված քրեական գործի շրջանակներում, դատախազի որոշմամբ, խուզարկվեց նաեւ նրա բնակարանը: Իրավապահները հայտնաբերեցին սուբուտեքսի հաբեր, դեղնականաչավուն զանգված եւ օգտագործված ներարկիչներ:

47-ամյա տղամարդուն մեղադրանք առաջադրվեց: Նա կալանավորվեց:

Հետախուզական միջոցառումները շարունակվեցին: Շուտով ոստիկանների տեսադաշտում հայտնվեցին անձինք, որոնք, բերման ենթարկվածից թմրամիջոց էին գնել: Արդյունքում՝ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին բերման ենթարկվեցին 46-ամյա երկու տղամարդ: Նրանց անձնական խուզարկությամբ եւս թմրամիջոց հայտնաբերվեց:

Հետախուզական միջոցառումներն ու քննչական գործողությունները շարունակվում են:

Զինանոցի կամավոր հանձնում

Ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնման ու հայտնաբերման ուղղությամբ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների ամենօրյա աշխատանքը արդյունք է տալիս:

Հուլիսի 8-ին հերթական դեպքն արձանագրվեց: Ոստիկանության Արարատի մարզային վարչության ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ վարչություն եկած 43-ամյա տղամարդը մի ողջ զինանոց էր բերել հանձնելու:

Գործարանային համարներով «Կալաշնիկովի» չորս ինքնաձիգը, գործարանային համարներով «ՏՕԶ» եւ «Կարաբին» տեսակի հրացանները, ինքնաձիգի 25 փամփշտատուփերը, 5,45 մմ տրամաչափի 700-ից ավելի փամփուշտները ուղարկվել են դատաձգաբանական փորձաքննության: Ապօրինի պահվող զենք-զինամթերքը կամավոր հանձնած տղամարդն էլ բաց է թողնվել:

Հիշեցնենք, որ ապօրինի զենք-զինամթերքը կամավոր հանձնողներն ազատվում են քրեական պատասխանատվությունից:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Դանակահարություն Երեւան-Մեղրի ճանապարհին

Հուլիսի 2-ին, կեսգիշերին մոտ, հիվանդանոցից ոստիկանության եղեգնաձորի բաժին ահազանգ ստացվեց, որ ազդրի կտրած-ծակած վերքով բուժօգնության է տեղափոխվել 32-ամյա մի կին: Քիչ անց ոստիկանության Վայքի բաժնում ահազանգ հնչեց Վայքի բուժհաստատությունից. հոսպիտալացվել էր 24-ամյա մի երիտասարդ, որի կրծքավանդակին կտրած-ծակած վերք կար:

Ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության, եղեգնաձորի ու Վայքի բաժինների, ինչպես եւ տարածքային նախաքննական մարմնի ծառայողները համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում պարզեցին, որ հիվանդանոցներ տեղափոխված անձինք վնասվածքները ստացել են Երեւան-Մեղրի ճանապարհի 134-րդ կիլոմետրին:

Նախնական տվյալներով՝ վիրավոր կնոջ ամուսինը եւ մի քանի երիտասարդներ երթեւեկության հետ կապված հարցերի շուրջ վիճել էին: Այդ ընթացքում էլ 34-ամյա տղամարդը դանակով խփել էր 24-ամյա երիտասարդին: Միջադեպի ժամանակ վնասվածք էր ստացել նաեւ նրա կինը:

Քրեական հետախույզները կասկածյալին հայտնաբերել եւ բերման են ենթարկել ոստիկանության եղեգնաձորի բաժին, ապա ներկայացրել դեպքի նախաքննությունը վարող մարմնին:

Կատարվում է քննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

«Եղբայրական» չկամություն

Շիրակի մարզի Փոքր Մանթաշ գյուղի բնակիչ Կարեն Բաղդասարյանը եղբոր՝ Վահրամի հետ չլուծված խնդիրներ ուներ, ինչը իր հետքն էր թողել նաեւ նրանց ընտանիքների փոխհարաբերությունների վրա: Կարենն ապրում էր հայրական տանը՝ մոր ու կնոջ հետ: Տարիներ առաջ մայրը տունը նվիրատվություն էր արել Ռուսաստանում բնակվող կրտսեր որդուն՝ Դրայրին: Նրա հետ եւս Կարենը խնդիրներ ուներ, քանզի իրեն պատկանող տունը, հողամասերը, հարակից շինությունները լիազորագրով Վահրամի տնօրինությանն էր հանձնել: Իհարկե, Կարենի սրտով չէր եղբոր որոշումը, բայց այլ ելք չուներ՝ տունը նրանն էր, որոշողն էլ նա էր:

Վահրամը մշակում էր հողամասերը, օգտագործում անասնագոմն ու նկուղները: Բերքն այնտեղ էր ամբարում: Վահրամն ու նրա կինը՝ Մանուշակը, օրվա ընթացքում նրանց տուն ելումուտ էին անում. նկուղից կարտոֆիլ էին հանում, անասնագոմից՝ սերմացու, իսկ Կարենի կինը՝ Ալվարդը, նեղսրտում էր տեգոր եւ Մանուշակի գնալ-գալուց: Երբ հերթական անգամ ամուսինները գնացին նկուղից ցանքսի համար կարտոֆիլ հանելու, Վահրամը պահանջեց, որ տունը ազատեն, քանզի լիազորագրով ինքն էր որոշումներ ընդունողը: Նրանց գնալուց հետո Ալվարդը նկուղից հանեց սանդուղքն ու տուն տարավ: Այդպիսով փորձեց վատություն անել նրանց:

Երբ Վահրամն ու Մանուշակը կրկին եկան, նկուղ իջնել չկարողացան. հասկացան, որ սանդուղքը Ալվարդն է տարել: Իսկ Ալվարդը դուռը ներսից փակել էր ու չէր արձագանքում տեգոր թակոցներին: Վահրամն էլ հրեց ու բացեց դուռը՝ տեղահան անելով փականի օղակը:

Վիճեցին: Վահրամը խփեց եղբոր կնոջ գլխին, հետ չմնաց նաեւ Մանուշակը:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Արթիկի բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապատրաստման ընթացքում կողմերը բացատրություններ տվեցին: Քրեական օրենսգրքի 118 հոդվածի մեղադրանքով կատարվում է քննություն:

Ոչ աշխատանքային հանդիպում

Մովսես Գալոյանը եւ Արամ Մելիքյանը Շիրակի մարզի Լեռնակերտ գյուղի հովիվներն էին: Աշխատում էին առանձին, ու թե հանդում հանդիպում էին, զրուցում, ժամանակ էին անցկացնում: Մտերիմ չէին, սոսկ աշխատանքի բերումով էին շփվում:

Այդ օրը Մովսեսը խմել ու իր համար բարձր տրամադրություն էր ապահովել: Երեկոյան գյուղամիջում պատահաբար հանդիպեց Արամին: Սթափ ու անսթափ զրուցակիցները իրար չհասկացան, եւ երկխոսությունը վերածվեց լեզվակռվի: Մովսեսը հայհոյեց Արամին: Լեզվակռիվը թեժացավ, սակայն Մովսեսը հաշտվելու փոխարեն դարձյալ հայհոյեց համագյուղացուն ու գնաց տուն:

Արամը որոշեց հանդիպել Մովսեսի հորը՝ պատմել եղելությունը ու զգուշացնել, որ որդին իրենից հնարավորինս հեռու մնա: Այդ մտորումներով էլ շտապեց նրանց տուն:

Արամի դռան թակոցներին արձագանքեց Մովսեսը: Արամը փորձեց ճշտել, թե ինչու էր իրեն հայհոյում: Վիճեցին, Արամը նրան հրեց գցեց, ապա բռունցքներով խփեց դեմքին:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Արթիկի բաժնի աշխատակիցները:

Արամ Մելիքյանի արարքում առկա էր քրեական օրենսգրքի 118 հոդվածով նախատեսված հանցարարք:

Կատարվում է քննություն:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Դայտաբղեs խճանկար

Ջորջ Բուշի դիմակով կողոպտիչները

Ավազակային հարձակում էր կատարվել ԱՄՆ Սիեթլ քաղաքի բանկերից մեկի վրա: Ավազակները նախկին նախագահ Բուշի դեմքով դիմակներով ներխուժել էին բանկ եւ զենքի գործադրմամբ փող պահանջել, ապա դիմել էին փախուստի:

Ոստիկանության աշխատակիցների կարծիքով՝ ավազակները մոտ երեսուն տարեկան, գերազանց պատրաստված, ամրակազմ երիտասարդներ էին: Իսկ դիմակները ձեռք էին բերել Հելոուինի համար նախատեսված իրերի խանութից:

ԱՄՆ-ում հաճախ են հանցագործություններ կատարում քաղաքական գործիչների դիմակներով: Օրինակ, Տեխասում ձերբակալվեց մի ավազակ, որը «գործի» էր դուրս եկել դարձյալ նախկին նախագահի դիմակով: Իսկ Ավստրիայում ձերբակալեցին մի հանցագործի, որը Օբամայի դիմակով էր հանցագործություն արել:

Մերկ կողոպտիչը

Ավստրալական «Northern Territory News» պարբերականի հաղորդմամբ՝ մերկ տղամարդը փորձել էր սրճարան թալանել:

Երեկոյան, երբ արդեն սրճարանը փակ էր, մերկ հանցագործը խուժել էր ներս եւ հափշտակել ոգելից խմիչք ու փող: Սակայն փախչել չէր հաջողվել. գործարկվել էր սրճարանի ազդանշանային համակարգը, եւ ոստիկանությունը որպեսզի ընթացքում հասել էր դեպքի վայր:

Ըստ ոստիկանության՝ հանցագործը մերկացել էր, որ հեշտությամբ անցներ ճաղավանդակներով:

Ավազակը՝ «մահվան» կերպարով

Ռուսաստանի Կեմերովոյի շրջանի Պրոկոպեւսկ քաղաքում մեկը «մահվան զգեստով» կողոպտել էր 86-ամյա թոշակառուի:

Դիմակավորվելով եւ զինվելով գերանդիով՝ հանցագործը խուժել էր թոշակառուի բնակարան: Խեղճ թոշակառուն սարսափահար էր եղել «հյուրի» տեսքից: «Մահը» փող էր պահանջել եւ բնակարանից հեռացել՝ տանելով տարեց մարդու ողջ խնայողությունը:

Ավազակին արագ հայտնաբերեցին ու ձերբակալեցին: Պարզվեց՝ նախկինում մի քանի անգամ դատապարտված կին էր:

Դանուն «դրամաշատ» մահճակալի

Թել Ավիվում ձերբակալել էին մի տղամարդու, որը բանկեր էր կողոպտում՝ սիրուհու հետ գիշերը դրամներով լի մահճակալին անցկացնելու համար: Ձերբակալվելու պահին զույգը հյուրանոցի համարում էր, իսկ մահճակալին թափված էին թալանված փողերը:

Տղամարդը մի շաբաթվա ընթացքում կողոպտել էր հինգ բանկ եւ «վաստակել» մի քանի տասնյակ հազար շեքել: Իր գործողությունները նա փորձում էր արդարացնել այն հանգամանքով, որ խաղացել եւ տանուլ էր տվել ողջ ունեցվածքը: Դրա համար էլ զբաղվում էր կողոպուտով:

Դատարանը կողոպտչի նկատմամբ խափանման միջոց ընտրեց տնային կալանքը:

Դատական նիստի հաջորդ օրը տղամարդը կատարեց հերթական կողոպուտը. ավարն այս անգամ 23 հազար շեքել էր:

Խաղալիք ատրճանակի նշանառության տակ

Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքում փորձել էին կողոպտել երկրի փոխնախագահին:

Երբ պաշտոնյայի ավտոշարասյունը կանգ էր առել խաչմերուկում, հանցագործը վազքով մոտեցել էր մեքենային եւ թակել պատուհանը: Մեքենայից դուրս էին եկել զինված աշխատակիցները, որոնց տեսնելով՝ հանցագործը փախել էր՝ ճանապարհին նետելով զենքը:

Ընդհանրապես, խաչմերուկներում մեքենաների վարորդներին եւ ուղեւորներին կողոպտելու փորձերը մեծ գլխացավանք են բրազիլական ոստիկանության համար:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Ավարձալի ամփոփագիր

Կաթսայով՝ գլխին

Առավոտյան հինգին հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ գլխի պատռած վերքով իրենց մոտ է տեղափոխվել 46-ամյա մի կին:

Ոստիկաններին նա հայտնել է, որ վնասվածքը ստացել է ճաշկերույթի ժամանակ. 33-ամյա համագյուղացին է կաթսայով խփել գլխին:

Բժշկի դիոլը

33-ամյա մի բժիշկ-օրդինատոր հաղորդում է տվել, որ Բագրատունյաց պողոտայում գողացել են իր դիոլը:

Ոստիկանության ՊՊԾ գնդի աշխատակիցները, գողություն կատարելու կասկածանքով բերման են ենթարկել 51-ամյա մի տղամարդու, որը տվել է խոստովանական բացատրություն:

Դիոլն առգրավված է:

Կեսլիտրանոց հարված

37-ամյա մի տղամարդ հաղորդում է տվել, որ գյուղի համայնքապետարանում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ նախկին կինը կեսլիտրանոց պոլիէթիլենային շշով խփել է դեմքին՝ պատճառելով վնասվածք:

Հաղորդում է տվել նաեւ նախկին կինը, եւ՝ շատ ավելի ծանրակշիռ: Ըստ նրա՝ երկու շաբաթ առաջ նախկին ամուսինը փայտով եւ ձեռքով խփել է իրենց 9-ամյա որդուն՝ պատճառելով վնասվածքներ:

ԱՊՊԱկառուցողական վեճ

Ոստիկանություն է զանգել 29-ամյա մի տղամարդ եւ հայտնել, որ ավտովթար է եղել, հարձակվել են իրենց վրա, իրեն տեղափոխում են հիվանդանոց:

Քիչ անց հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ գլխուղեղի ցնցումով, ստորին ծնոտի պատռած վերքով բուժօգնության տեղափոխված տղամարդը հայտնել է, որ իրեն ծեծել են, եւ փախչելիս ինքն ընկել է մեքենայի տակ:

Ոստիկանները պարզել են, որ անհայտ կնոջ վարած «ԲՄՎ»-ն բախվել է տղամարդու «Մերսեդես»-ին, ծագել է վիճաբանություն, կին վարորդի կանչով եկած 3-4 հոգին էլ ծեծել են տղամարդուն:

Դամակարգիչով՝ գլխին

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ փակ գանգուղեղային վնասվածքով բուժօգնության է դիմել 43-ամյա մի կին: Նա հայտնել է, որ վնասվածքը ստացել է ինքնաթիռում:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ ինքնաթիռում կնոջ գլխավերեւում գտնվող դյուրակիր համակարգիչը անզգուշությամբ գցել է նրա կողքին նստած լեհ ուղեւորը:

Դակամանկավարժական արարք

Հաղորդում է տվել մի դպրոցի տնօրեն: Ըստ նրա՝ դպրոցի նախնական զինվորական պատրաստություն առարկայի ուսուցիչը ամիսներ առաջ դպրոցից գաղտնի վերցրել է ուսումնական նպատակով օգտագործվող զենքը, հաջորդ օրը անտառում կազմակերպված խնջույքի ժամանակ օգտագործել այն, այնուհետեւ զենքը վերադարձրել դպրոց:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հուլիսի 11-ից 18-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 31 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու եւ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու, 1-ը՝ գողության, 2-ը՝ խարդախության, 1-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ յուրացնելու կամ վատնելու, առանց հափշտակելու նպատակի ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալու եւ ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթեւեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու, 1-ը՝ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելու կամ վնասելու, 1-ը՝ սուտ մատնության համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 9 հետախուզվող:

Արձանագրվել է 83 ճանապարհատրանսպորտային պատահար. 4 մարդ զոհվել է, 114-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 17 դեպք. 17 մարդ ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Հուլիսի 15-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան Երեւանի Կոմիտասի պողոտայում բախվել է կայանած «Տոյոտա» եւ «Դեյու» մակնիշի ավտոմեքենաների. «Մերսեդես»-ի 35-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 15-ին Երեւանի Ծովակալ Իսակովի պողոտայում իրար են բախվել «Մերսեդես» եւ երկու «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ներից մեկի 43-ամյա վարորդը եւ 10-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հուլիսի 15-ին Երեւան-Երասխ ճանապարհի 44-րդ կմ-ին՝ Արարատի մարզի Այգավան գյուղում, «Մերսեդես Բենց C-180» մակնիշի ավտոմեքենան բախվել է մեկ այլ «Մերսեդես Բենց C-180» մակնիշի ավտոմեքենայի. վարորդները եւ երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հուլիսի 15-ին էջմիածին քաղաքի Մաշտոցի փողոցում «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 3-ամյա երեխայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 15-ին Գետափ-Մարտունի ճանապարհի 3-րդ կմ-ին իրար են բախվել «ՎԱԶ-21099» եւ «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենաներ. վարորդները եւ երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հուլիսի 16-ին Սեւան-Մարտունի-Գետափ ճանապարհի 24.9 կմ-ին իրար են բախվել «ԳԱԶ-2705-222» եւ «ԶԻԼ-ՄՄԶ-555» մակնիշի ավտոմեքենաներ. «ԳԱԶ-2705-222»-ի 43-ամյա վարորդը տեղում մահացել է, իսկ «ԶԻԼ-ՄՄԶ-555»-ի 24-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 16-ին Երեւանի Խանջյան փողոցում իրար են բախվել «Սամանդ» եւ «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ի 22-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 16-ին Երեւանի Արտաշիսյան փողոցից դեպի Երեւանյան լիճ տանող ճանապարհին «ՎԱԶ-2109» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 11-ամյա հեծանվորդի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 16-ին Երեւանի Հր. Քոչարի փողոցում «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 25-ամյա քաղաքացու. քաղաքացին եւ մեքենան վարող 14-ամյա պատանին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հուլիսի 16-ին Երեւանի Սվաճյան փողոցում իրար են բախվել «ԲՄՎ» եւ «Նիսան» մակնիշի ավտոմեքենաներ. «Նիսան»-ի չորս ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հուլիսի 16-ին Տաշիր քաղաքի Երեւանյան-Խանջյան փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Մերսեդես Բենց G55» եւ «Մերսեդես Բենց E 350» մակնիշի ավտոմեքենաներ. 14-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 16-ին Շիրակի մարզի Ախուրիկ գյուղում «ՎԱԶ-211140» մակնիշի ավտոմեքենան կորցրել է կառավարումը եւ բախվել ճամփեզրի ծառին. 20-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 16-ին Երեւան-Գյումրի ճանապարհի 107-րդ կմ-ին «Օպել Վեկտրա» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ կողաշրջվել. երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Նովոչերկասկ

Սկիզբը՝ նախորդ համարում

Հունիսի 2-ի գիշերը Նովոչերկասկ են մտնում զինվորական ստորաբաժանումներ, որոնք հսկողության եւ պահպանության տակ են առնում կարեւոր հիմնարկությունները եւ հաստատությունները: Պետանվտանգության աշխատակիցները ձերբակալում են մի քանի ակտիվիստների, սակայն դա որեւէ ազդեցություն չի ունենում. առավոտյան բանվորները սկսում են հավաքվել՝ Լենինի նկարներով, կարմիր դրոշներով եւ հեղափոխական երգեր երգելով: Նրանց փորձում են կանգնեցնել տանկերով եւ զրահամեքենաներով, բայց՝ ապարդյուն: Զինվորականները խուսափում էին ընդհարումից: Գեներալ Շապոշնիկովը, որին Իսա Պլիեւը հրամայել էր կանգնեցնել ցուցարարներին, հակաճառեց. «Ես իմ առաջ չեմ տեսնում հակառակորդի, որի դեմ կարելի է տանկ գործադրել»: Նա հրամայեց զինվորներին լիցքաթափել զենքը:

Խորհրդային Միության հերոս, գեներալ-լեյտենանտ Շապոշնիկովը 1966 թ. ծառայությունից ազատվեց. ՊԱԿ-ը նրան մեղադրեց հակախորհրդային քարոզչության մեջ: Գեներալին փրկեց մարշալ Մալինովսկու միջամտությունը: Երբ հետագայում Շապոշնիկովին հարցրին, թե ինչ կլիներ, եթե նա ենթարկվեր հրամանին եւ կարգադրեր տանկերով գրոհել ցուցարարների վրա, գեներալը պատասխանեց. «Հազարներով կզոհվեին»:

Ցուցարարները հասնում են մինչեւ քաղաքի կենտրոն: Քաղաքային կոմիտեում մնացել էին միայն շրջանային խորհրդի նախագահ Զամուլուն եւ քաղաքի դատախազ Պրոցենկոն, իսկ ղեկավարությունը ճողոպրել էր: Նրանք չկարողացան հանգստացնել ցուցարարներին: Քաղաքային կոմիտեն գրավվեց: Սկսվեց կողոպուտ: Ցուցարարների մի մասը որոշեց ազատել նախօրյակին ձերբակալված ու քաղաքային միլիցիայում գտնվող իրենց ընկերներին: Միլիցիան պահպանում էին ներքին զորքերի մի քանի տասնյակ զինվորներ՝ փոխգնդապետ Նիկոլայ Մալյուգինի հրամանատարությամբ: Ներխուժելով շենք՝ առավել արմատական ցուցարարները փորձեցին զինաթափել զինվորներից մեկին: Նրա ընկերը դա տեսնելով՝ կրակ բացեց, արդյունքում զոհվեց հինգ մարդ:

Այդ նույն ժամանակ քաղաքային կոմիտեի շենքը շրջապատեցին ներքին զորքերի զինվորները: Նովոչերկասկի կայազորի պետ, գեներալ Իվան Օլեշկոն փորձում էր ցուցարարներին զսպել՝ կոչ անելով դադարեցնել անկարգությունները եւ ցրվել, սակայն նրանք միայն հայհոյում էին ու սպառնալիքներ հնչեցնում: Երբ միլիցիայի քաղաքային բաժնի կողմից հնչեցին կրակոցներ, քաղաքային կոմիտեն շրջապատած զինվորները սկսեցին օդ կրակել: Վախեցած ամբոխը ընկրկեց, սակայն ինչ-որ մեկը գոռաց, որ փամփուշտները մարտական չեն: Օդում երկրորդ համազարկից հետո զինվորները սկսեցին կրակել ամբոխի վրա: Սկսվեց սարսափելի խուճապ:

1962 թ. հունիսի 2-ին Նովոչերկասկում զոհվեց քսանից ավելի մարդ, ութսունից ավելին վիրավորվեց: Սպանվածների դիակները թաղվեցին անհայտ վայրում:

Անկարգությունների եւ ավազակության համար դատապարտվեց 112 հոգի, նրանցից 7-ը գնդակահարվեց, մյուսները դատապարտվեցին 10-15 տարվա բանտարկության: Հասկանալով, որ պատժիչ գործելակերպով հնարավոր չէ բնակչությանը հանդարտեցնել, Նովոչերկասկ ուղարկվեց մեծ քանակությամբ պարեն, ինչը վաճառվեց ցածր գներով:

Մարզային կոմիտեի առաջին քարտուղար Ալեքսանդր Բասովը, Նովոչերկասկի քաղկոմի առաջին քարտուղար Տիմոֆեյ Լոգինովը եւ էլեկտրաքարշերի գործարանի տնօրեն Բորիս Կուրոչկինը զրկվեցին պաշտոններից: 1964 թ. աշնանը «պալատական հեղաշրջման» հետեւանքով Խրուշչովը կորցրեց իր իշխանությունը: Նրան ներկայացված մեղադրանքներից մեկն էլ Նովոչերկասկի դեպքերն էին:

1992 թ. Գլխավոր զինվորական դատախազությունը Խրուշչովի, Կոզլովի, Միկոյանի եւ ութ այլ անձանց նկատմամբ քրեական գործ հարուցեց Նովոչերկասկի գնդակահարության համար, սակայն քրեական գործը կարճվեց նրանց մահվան պատճառով:

Ինչո՞ւ Նովոչերկասկի ցուցարարների նկատմամբ կիրառվեցին դաժան պատժամիջոցներ, մի՞թե հնարավոր չէր նրանց ցրել մահակների եւ արցունքաբեր գազի միջոցով: Հետազոտողներից ոմանք համոզված են, որ դա արվեց դիտավորյալ: Իշխանությունները ցանկանում էին դաս տալ բնակչությանը, քանի որ Նովոչերկասկի նկատմամբ բոլշեւիկները հատուկ վերաբերմունք ունեին: Քաղաքացիական պատերազմի ժամանակ Նովոչերկասկը բոլշեւիկների դեմ պայքարող կազակային Դոնի զորքի մայրաքաղաքն էր եւ Լենինի բնորոշմամբ՝ համարվում էր հակահեղափոխության բույնը:

Պատրաստեց **Ռուբեն ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Վայրագ պատուրաս



1996 թ. փետրվարի 18-ին Շույա քաղաքի Վասիլեւսկի փողոցի առանձնատներից մեկում, որտեղ ապրում էր 51 տարեկան Վասիլի Կիչուգինը, ողբերգություն կատարվեց:

Վասիլի Կիչուգինը միայնակ էր, աշխատում էր մի քանի տեղ, ոգելիցը չէր չարաշահում: Փետրվարին նրան հյուրընկալվեց Յուրի Դորոխովը ու որոշեց մի քանի օր մնալ: Տանտերը չառարկեց:

Փետրվարի 18-ի երեկոյան նա մի հյուր էլ ուներ՝ Վլադիմիր Մոզլովը, որը եկել էր ծանոթի հետ: Այս երկուսը պատահմամբ էին հանդիպել փողոցում, բայց նույն ցանկությունն ունեին՝ խմե՛լ: Հավաքվեցին, խմիչք էլ հայտնվեց, վառեցին մոմերը (էլեկտրականություն չկար) ու սկսեցի՜ն...

Մոզլովի փողոցային ծանոթը բարձրահասակ, սեւ մորուքով մարդ էր, ներկայացավ որպես Սաշկա: Նա ընկերախմբի ամենաերիտասարդն էր:

Որոշ ժամանակ անց, երբ բավականաչափ խմել էին, տանտերն անցավ հարեւան սենյակ՝ քնելու, իսկ բաժակակիցները շարունակեցին: Էլի ժամանակ անց սեւամորուք Սաշկան հանկարծ կատաղեց. ինչ-որ բան էր բղավում, հայհոյում, հետո հարձակվեց Դորոխովի վրա: Մոզլովը փորձեց պաշտպանել ընկերոջը, բայց այնպիսի հարված ստացավ, որ գլորվեց հատակին: Մորուքավորը սեղանից ճանկեց դանակն ու նետվեց Դորոխովի վրա: Գազանի պես հարվածում էր նրան, բզիկբզիկ անում, ծակծկում ու կտրատում: Մոզլովն ուշքի գալով՝ վեր թռավ, սակայն Սաշկան փակել էր դուռը: Մոզլովը նետվեց դեպի ննջարանը, բայց նոր էր ոտք դրել շեմին, երբ դանակը խրվեց թիկունքը...

Արթնացած տանտերը (այդ արյունոտ խրախճանքի միակ կենդանի վկան) հետագայում այսպես կպատմի նախաքննությանը. «Մոզլովը մտավ ննջարան: Նրա հետեւից՝ Սաշկան, որն ինչ-որ բանով խփեց գցեց Մոզլովին, ու մոտեցավ իմ մահճակալին: Ցած գցեց ինձ ու սկսեց ոտքերով խփել, դանակը խցկեց բերանս, կտրատեց շրթունքներս: Հետո հանկարծ գոռաց. «Ես արքա եմ, Աստված: Ծնկի՛»: Հարվածների նոր շարքից հետո նա բաց թողեց ինձ ու նետվեց Մոզլովի կողմը: Դրանից օգտվելով՝ մի կերպ բարձրացա մահճակալին, ու վերմակը գլխիս գցելով՝ պահ մտա...»:

Դրանից հետո Սաշկան գործի դրեց ինչ-որ տեղից գտած տուրիստական փոքրիկ կացինը: Ձոհերը դեռ ողջ էին, ու դահիճը քայլերն ուղղեց նրանց կողմը: Առաջինը խփեց Դորոխովի պարանոցին ու կտրեց գլուխը: Նույն կերպ վերջ տվեց նաեւ Մոզլովին: «Բացառություն» արվեց միայն տանտիրոջ համար…

Սաշկան իրեն մսագործի պես էր պահել: Հետագայում՝ փորձաքննությամբ միայն Դորոխովի մարմնին դանակով ու կացնով հասցված 50 վնասվածք հայտնաբերվեց: Իսկ տանտիրոջ բախտն, այնուամենայնիվ, բերեց. նա բազմաթիվ վերքեր էր ստացել դեմքին ու պարանոցին, ջարդվել էր ծնոտը, ուղեղի ցնցում էր ստացել, ահագին արյուն կորցրել, բայց ողջ մնաց: Թեեւ երկար չապրեց. նույն տարվա ապրիլին մահացավ մենինգիտից:

Այս հաշվեհարդարից հետո դեպքերը զարգացան սրընթաց արագությամբ: Ամենայն հավանականությամբ, որոշելով ողջ աշխարհին ապացուցել, որ ինքը «արքա եւ Աստված» է, Սաշկան որոշեց կտրված գլուխը ներկայացնել համընդհանուր «դիտման»: Արագ հագնվելով՝ պայուսակի մեջ դրեց կացինը, դեռեւս տաք գլուխները ու դուրս եկավ տնից: Մոտակայքում Լենինի հրապարակն էր, եւ հենց հուշարձանի տակ էլ դրեց գլուխները:

Իսկ Կիչուգինին գտավ ու փրկեց հարեւանը. երեկոյան զբոսանքի գնալիս նկատել էր, որ դուռը կիսաբաց է, մտել էր ու տանտիրոջը ընկած տեսնելով՝ զանգել էր «շտապօգնություն» եւ միլիցիա: Մի քանի րոպեից ոստիկանական կարգախումբը դեպքի վայրում էր: Հարեւանները նկարագրեցին խրախճանքի մասնակիցներին, որոնցից միայն մեկն էր անծանոթ՝ սեւ մորուքավորը: Իսկ քիչ անց ոստիկաններից մեկը դարպասատակին մի տղամարդու տեսավ, որի արտաքին նշանները մեկին մեկ համապատասխանում էին նկարագրվածին: Երբ նրան բերման ենթարկեցին, պարզվեց, որ չեն սխալվել. անծանոթի ձեռքերն արյունոտ էին, հագուստն ու պայուսակը՝ նույնպես: Նրան հասցրին բաժին, որտեղ պարզվեց, որ նա 1958 թ. ծնված Ալեքսանդր Կորինն է՝ Շույա քաղաքի բնակիչ, նախկինում գողության համար դատված:

Դատաբժշկական փորձաքննությամբ պարզվեց, որ Կորինը տառապում է շիզոֆրենիայով եւ հանցագործությունը կատարելիս անմեղսունակ վիճակում է եղել: Նրան տեղավորեցին հոգեբուժարանում: Ուշագրավ է, որ երբ 1994-ին պատասխանատվության էր կանչվել գողության համար, նրան դարձյալ տեղավորել էին հոգեբուժարանում, եւ «բուժվելուց» հետո կես ամիս անց հեռացել էր…

«Մանագերը»

Հունիսի 21-ին Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանություն բերման ենթարկվեց 2015 թվականից քրեական օրենսգրքի 178 հոդվածի՝ խարդախության մեղադրանքով հետախուզման մեջ գտնվող Աշոտ Հովսեփյանը: Նա ներկայացվել է քրեական գործի վարույթն իրականացնող նախաքննական մարմնին:

Խարդախության համար միայն ուրիշի գույքը հափշտակելու ցանկություն ունենալը բավարար չէ. նաեւ առանձնահատուկ շնորհք է պետք: Ինչպիսին ուներ 54-ամյա Աշոտ Հովսեփյանը:

Հայաստանյան բուհերից մեկում սովորող իրանցի երիտասարդին իրավաբանությունից լավ հասկացող մասնագետ էր ներկայացել Աշոտ Հովսեփյանը: Երիտասարդն անմիջապես նրա օգնությանն էր դիմել, երբ Իրանից ժամանած ընկերների հետ որոշել էին Հայաստանում առեւտրային կազմակերպություն հիմնել: Աշոտ Հովսեփյանը հինգ հարյուր դոլար «մաղարիչի» դիմաց օգնել էր սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրանցման հարցում: Հետո օգնել էր նաեւ կնիք ձեռք բերելու հարցում: Ամեն ինչ եղել էր օրինական: Պարզապես Աշոտ Հովսեփյանը երիտասարդներին արած լավությունն իրականում շահ ստանալու, նրանցից փող կորզելու համար էր արել:

Աշոտ Հովսեփյանի նկատմամբ խարդախության փաստով հարուցված քրեական գործով իրանցի երիտասարդներն անցնում են որպես վկաներ: Տուժողը, ումից Հովսեփյանը գումար էր հափշտակել, Երեւանի բնակիչ է. նրան պայմանականորեն Պողոս Մինասյան կոչենք:

2014 թվականին Պողոս Մինասյանը Խարբերդ գյուղում առանձնատուն գնեց: Մեկ տարի անց պարզվեց, որ նախկին տերերը, որոնց նոր բնակատեղի մասին չգիտեր, առուվաճառքի գործարքը կատարել էին կեղծ փաստաթղթերով: Հենց այդ հարցում էլ նրան օգնելու պատրաստակամություն հայտնեց Աշոտ Հովսեփյանը. Պողոս Մինասյանի հետ գնաց ոստիկանություն, հաղորդում տվեց, ինչի հիման վրա քրեական գործ հարուցվեց, տան նախկին տերերի նկատմամբ հայտարարվեց հետախուզում:

Աշոտ Հովսեփյանը լավությունն արեց առանց ակնկալիքի: Ակնկալելու բան էլ չկար. տուժողը կարող էր առանց իր ուղեկցության էլ գնալ ու հայտարարություն տալ ոստիկանությունում: Ծահադիտական նպատակով լավությունն արեց հետո, երբ ավելի հիմնավոր առիթ եղավ, երբ համոզվեց Պողոս Մինասյանի միամտության մեջ: Առաջարկեց հիփոթեքային վարկով տուն գնել: Լավ առաջարկ էր, բայց Պողոսյանի համար անհիրագործելի. մշտական աշխատանք ո՛չ ինքն ուներ, ո՛չ կինը: Սակայն Աշոտ Հովսեփյանի համար դա անլուծելի խնդիր չէր. դիմեց իրանցի երիտասարդներին եւ աշխատավայրի մասին տեղեկանք վերցրեց նրանցից:

Բայց պարզվեց, որ բանկը աշխատանքի նոր ընդունվածներին վարկ չէր տրամադրում: Ուրեմն պետք էր կեղծիքի դիմել: Դա էլ Աշոտ Հովսեփյանի համար անլուծելի խնդիր չէր. տեղեկանք կվերցներ հետին ամսաթվով: Անձամբ պատրաստեց աշխատավայրի ու աշխատավարձերի վերաբերյալ տեղեկանքները եւ ծանոթ իրանցիների ընկերության կողմից կնքեց... իր կողմից տնայնագործական եղանակով պատրաստած կնիքով: Հետագայում դատաձեռագրաբանական եւ դատափաստաթղթաբանական համալիր փորձաքննությամբ պարզվեց դա: Երբ «տեղեկանքները» պատրաստ էին, զանգեց Պողոս Մինասյանին ու ասաց՝ քանի որ ամուսիններն աշխատանքի էին «ընդունվել» հետին ամսաթվով, ուստի այդ ժամանակահատվածի համար սոցվճարումներ չկատարելու պատճառով ընկերությանը չտուգանելու համար անհրաժեշտ է հարյուր հազար դրամ: Հանդիպեց Մինասյանին, հանձնեց տեղեկանքները եւ ստացավ հարյուր հազար դրամը:

Օրեր անց կրկին հանդիպեցին. որպես վարկի տրամադրման երաշխիք՝ Մինասյանը պետք է վճարեր տրամադրվելիք գումարի 30 տոկոսը:

Կանխավճարն անձամբ Աշոտ Հովսեփյանին տալուց հետո Պողոս Մինասյանը հույսով սպասում էր վարկի տրամադրմանը:

Իսկ Հովսեփյանի ախորժակը բացվել էր: Երկու շաբաթվա ընթացքում մաս-մաս չորս միլիոն դրամ հափշտակեց Մինասյանից՝ ամեն անգամ բերելով մի նոր պատճառ: Իսկ երբ վերջապես Պողոս Մինասյանը փաստաթղթերի փաթեթով ներկայացավ վարկ ստանալու, նրանից պահանջեցին նաեւ վճարումների մասին տեղեկանք: Բայց պարզվեց, որ նման տեղեկանք ներկայացնել չէր կարող, որովհետեւ իրականում նշված ՍՊԸ-ում որպես աշխատող գրանցված չէր:

Զայրացած զանգեց Աշոտ Հովսեփյանին ու չորս միլիոն դրամը հետ պահանջեց: Նա էլ խոստացավ ու հաջորդ օրը եւեթ մեկնեց հանրապետությունից:

Հարուցված քրեական գործի կասեցված վարույթը վերսկսվել է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Ոստիկանները բացահայտեցին գողությունները

Հուլիսի լույս 7-ի գիշերը ոստիկանության Դավիթաշենի բաժանմունքի քրեական հետախույզները գողության վերաբերյալ օպերատիվ տվյալներ ստացան, որոնց հիման վրա դարանակալեցին Տիգրան Պետրոսյան փողոցում:

Ճշգրիտ կազմակերպված օպերատիվ միջոցառումների շնորհիվ քրեական հետախույզների տեսադաշտում հայտնվեցին երկու երիտասարդներ, որոնք լինգով բացել էին Տիգրան Պետրոսյան փողոցի հանրախանութներից մեկի դուռն ու գողացել դրամարկղը: Ոստիկանները, նրանց տեսնելով՝ հետապնդեցին: Երիտասարդները փորձեցին փախուստի դիմել, բայց դեպքի վայրից մի քանի տասնյակ մետր հեռու բռնվեցին ու բերման ենթարկվեցին ոստիկանության Մաշտոցի բաժին:

Կասկածանքով բերման ենթարկված երիտասարդները խոստովանական բացատրություն են տվել:

Գողության հաջորդ դեպքը, որ բացահայտեցին Մաշտոցի ոստիկանները, գրանցվել էր հուլիսի 4-ին:

Ահազանգ էր ստացվել, որ Վահագնի թաղամասից շինանյութ են գողացել: Քրեական հետախույզները ձեռնարկեցին անհրաժեշտ օպերատիվ միջոցառումներ՝ կարճ ժամանակում բացահայտելով հանցագործությունը: Նրանց տեսադաշտում հայտնվեց Կոտայքի մարզում ապրող մի երիտասարդ, որին հայտնաբերելու միջոցառումները եւս կարճ տեւեցին:

Հուլիսի 7-ին կասկածյալը Կոտայքի մարզի Պռոշյան գյուղում հայտնաբերվեց, բերման ենթարկվեց ոստիկանության Մաշտոցի բաժին եւ տվեց խոստովանական բացատրություն:

Երկու դեպքով էլ քննություն է կատարվում:

Բնակարանային գողությունները բացահայտվեցին

Հունիսի 17-ին ոստիկանության Վաղարշապատի բաժին ահազանգած կինը հայտնել էր, որ Էջմիածնի Խորենացու փողոցի իր բնակարանից գողացել են դրամապանակը: Հաջորդ օրը ոստիկանության Վաղարշապատի բաժնում հնչեց գողության վերաբերյալ եւս մեկ ահազանգ. տնից հափշտակել էին մեկուկես միլիոն դրամի ոսկեղեն: Այս դեպքում եւս բնակարանը Էջմիածնի Խորենացու փողոցում էր: Բացի այդ ընդհանրությունից՝ երկու բնակարաններն էլ վաճառվում էին:

Վաղարշապատի քրեական հետախույզները, դեպքերին պրոֆեսիոնալ մոտեցման արդյունքում, վարկած առաջ քաշեցին, որը շուտով հիմնավորվեց: Ոստիկանները պարզեցին, որ գողություն կատարած անձը բնակարանները գնելու նպատակով մուտք գործած երիտասարդն է, որի ինքնությունն ու գտնվելու վայրը պարզվեց:

Արագածոտնի մարզի Աղձք գյուղի բնակիչ, նախկինում դատապարտված երիտասարդը հայտնաբերվեց Էջմիածնում ու բերման ենթարկվեց: Նա կալանավորվել է:

Կատարվում է նախաքննություն:

Ապօրինի ծառահատումներ

Ոստիկանության Թումանյանի բաժնի քրեական հետախույզներն ու համայնքային ոստիկանները հերթական ուժեղացված ծառայությունն իրականացրին ապօրինի ծառահատումները կանխելու եւ բացահայտելու նպատակով: Քարինջ-Թումանյան ճանապարհին հայտնաբերվեցին Վանաձորի 42-ամյա մի բնակչի «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենան, որը բեռնված էր 3 խմ փայտանյութով: Վարորդը բեռի օրինականությունը հավաստող որեւէ փաստաթուղթ չներկայացրեց եւ, մեքենայով հանդերձ, տեղափոխվեց ոստիկանության Թումանյանի բաժին: Պարզվեց, որ ծառերը հատվել էին Լոռու մարզի Մարց գյուղի հարակից անտառից:

Այս բացահայտումից որոպեներ անց ոստիկանության Թումանյանի բաժնի ծառայողները դարձյալ 3 խմ փայտանյութով բարձված եւս մի «Ֆորդ» հայտնաբերեցին: Վարորդը, որը Մարց գյուղի բնակիչ է, որեւէ փաստաթուղթ չներկայացրեց եւ, մեքենայով հանդերձ, տեղափոխվեց բաժին: Պարզվեց, որ նա եւս ծառերը հատել էր Մարց գյուղի հարակից անտառից:

Ապօրինի ծառահատումների փաստերով ոստիկանության Թումանյանի բաժնում նյութեր են նախապատրաստվում:

Բացահայտում են Մաշտոցի ոստիկանները

Հունիսի 21-ին ոստիկանության Մաշտոցի բաժնի քրեական հետախույզները, գողություն կատարելու կասկածանքով, Երեւանի Սիլիկյան թաղամասից 27-ամյա երիտասարդի էին բերման ենթարկել: Պարզվել էր, որ մայրաքաղաքում ապրող երիտասարդը ապրիլին 16-րդ թաղամասում «Մերսեդես»-ի կողային հայելիներ էր գողացել, նաեւ Աջափնյակի տարբեր թաղամասերում մի շարք գողություններ արել:

Երիտասարդը տվեց խոստովանական բացատրություն, ստորագրությամբ բաց թողնվեց, իսկ օրեր անց կրկին բերման ենթարկվեց: Այս անգամ՝ կողոպուտի կասկածանքով:

Պարզվեց, որ հունիսի 24-ին



նա Մարգարյան փողոցում մի կնոջ էր կողոպտել՝ հափշտակելով պարանոցի ոսկյա շղթան: Բերման ենթարկվելուց հետո կրկին խոստովանեց կատարածը: Կողոպուտի փաստով քրեական գործ հարուցվեց: Նրան մեղադրանք առաջադրվեց, խափանման միջոց ընտրվեց կալանավորումը:

Հունիսի 22-ին դարձյալ Մարգարյան փողոցում կողոպուտ էր կատարվել, ինչի մասին ոստիկանության Մաշտոցի բաժնում հաղորդում էր ստացվել: Քրեական հետախույզները օպերատիվ տվյալներ ունեին, որ այդ կողոպուտը կատարել է արդեն կալանավորված երիտասարդը: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում նա ցուցմունք տվեց, որ հունիսի 22-ին Մարգարյան փողոցում մի կնոջ պարանոցից պոկել էր ոսկյա շղթան ու փախել:

Նախաքննությունը շարունակվում է:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանցագործությունները բացահայտվեցին

Քրեական հետախույզները, իրացնելով օպերատիվ տվյալները, հսկողության տակ էին վերցրել Գեղարքունիքի մարզի ուսումնական հաստատություններից մեկը, որի մոտակայքում ծխախոտ ու էլի ինչ-որ ապրանք էր վաճառվում՝ իրական արժեքից շատ էժան: Պետք էր պարզել վաճառողների ինքնությունը, ապա՝ ապրանքի ձեռք բերման աղբյուրը:

Օպերատիվ հարցումների եւ ձեռնարկված հետախուզական միջոցառումների արդյունքում իրավապահներն ընտրեցին վարկածներից մեկը, դրան գումարվեցին նաեւ ստացված օպերատիվ տվյալները, եւ պատկերն աստիճանաբար հստակվեց: Ըստ նախնական տեղեկությունների՝ վաճառվող ապրանքը գողացված էր:

Իրացնելով ստացված տեղեկությունները՝ քրեական հետախույզները կարճ ժամանակում պարզեցին, որ գողությունը կատարվել էր դեռեւս անցյալ տարվա աշնանը: Շարունակական աշխատանքների արդյունքում պարզվեցին նաեւ դեպքի վայրն ու գողությունը կատարած անձանց ինքնությունը: Երկու դեպքերում էլ հետքերը ոստիկաններին Գեղարքունիքի մարզի գյուղերից մեկը տարան. գողությունն այնտեղ էր կատարվել եւ կատարողներն էլ այդ գյուղից էին:

Օպերատիվ տեղեկությունների իրացումը ոստիկաններին հնարավորություն տվեց կարճ ժամանակում ճշտել գողության թիրախ դարձած խանութն ու ոստիկանություն հրավիրել տուժողին: Շուտով նրանց տեսադաշտում հայտնվեց նաեւ երիտասարդների մի խումբ, որն, ամենայն հավանականությամբ, կատարել էր գողությունը: Ըստ նախնական տեղեկությունների՝ խումբը բաղկացած էր չորս հոգուց, որոնցից մեկն անչափահաս էր: Չորսն էլ հայտնաբերվեցին ու բերման ենթարկվեցին:

Գողության կասկածանքով բերման ենթարկվածներն էին 23-ամյա Արտակ Մելիքյանը, 22-ամյա Արթուր Սուքիասյանը, 21-ամյա Սահակ Կարապետյանն ու անչափահաս Արգամը: Ձեռք բերված անհերքելի փաստերի ճնշման տակ եւ բացատրական աշխատանքի արդյունքում երիտասարդները խոստովանական ցուցմունք տվեցին:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվեց, որ խմբի հանցավոր գործողությունների թիրախում միայն գյուղի խանութը չէր, որտեղից, ի դեպ, մոտ մեկ միլիոն դրամ արժողության ապրանք էին գողացել: Թալանել էին «ԳԱԶ-24» մակնիշի երկու ավտոմեքենա եւ երեք խանութ: Եվ այդ ամենը՝ մեկ գիշերվա ընթացքում:

Այդ օրը, երեկոյան հավաքվել էին զվարճանալու: Գնումներ էին արել ու գնացել տղաներից մեկի նորակառույց տունը: Խմել էին, զվարճացել: Հետո խրախճանքի վայրից դուրս գալով՝ գործի էին անցել: Սկսել էին մեքենաներից: Հաջորդաբար բացել էին մեքենաների դռներն ու գողացել ձայնագրիչները: Հաջորդը խանութներն էին: Երեք խանութից, սակայն, միայն մեկից էին «ցանկալի» ավար տարել, մյուս երկու դեպքում հասցված վնասը մի քանի հազար դրամի էր:

Արտակ Միքայելյանը եւ Արթուր Սուքիասյանը միասին մեկ այլ խանութ էլ էին մտել: Տեսնելով, որ գյուղում մահացած մարդ կա, եւ գյուղացիները զբաղված են, օգտվել էին առիթից ու ձողով բացելով պատուհանը մտել էին, բայց գործն ավարտին հասցնել չէին կարողացել եւ լքել էին տարածքը:

Մի հանցավոր խումբ էլ օրերս վնասազերծեցին ոստիկանության Մասիսի բաժնի ծառայողները: Քրեական հետախույզների ուշադրության կենտրոնում էին հայտնվել մայրաքաղաքում բնակվող երեք երիտասարդներ, որոնք մարզում գողություններ էին անում:

Իրավապահները տեղեկացան, որ խումբը նոր գողություն է ձեռնարկում: Պարզեցին վայրն ու գործողության ժամը: Եվս մի քանի րոպե՝ եւ կասկածյալները դեպքի վայրում հայտնվեցին ոստիկանների օղակում:

Բերման ենթարկվածներն էին 23-ամյա Սարգիս Գալստյանը, 26-ամյա Ռուբեն Սարգսյանը եւ 19-ամյա Խորեն Սիմոնյանը: Անձնական խուզարկությամբ նրանց մոտից հայտնաբերվեցին գողացված նոթբուք, ոսկյա խաչ ու բիժուտերիա:

Պարզվեց, որ հանցախումբը միայն երեք հոգուց չի բաղկացած: Արդեն հաջորդ օրը քրեական հետախույզներին հաջողվեց հայտնաբերել ու բերման ենթարկել խմբի եւս երկու անդամի՝ նույն քաղամասի բնակիչներ Լեւոն Մելքումյանին ու Կամո Չոբանյանին:

Պարզվեց նաեւ, որ հանցավոր խումբը անցյալ տարվա նոյեմբերից իրագործել էր եւս վեց բնակարանային գողություն:

Հարուցված քրեական գործերով նախաքննությունը շարունակվում է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Թմրամիջոցի հայտնաբերում

Հուլիսի 12-ին ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության եւ Շենգավիթի քրեական հետախույզների ձեռնարկած համատեղ միջոցառմամբ Աէրացիա թաղամասից, իրենց վարած մեքենաներով հանդերձ, ոստիկանության Շենգավիթի բաժին բերման ենթարկվեցին երկու երիտասարդ, որոնք կասկածվում էին թմրամիջոց ձեռք բերելու, պահելու եւ իրացնելու մեջ:

Անձնական խուզարկությամբ նրանցից մեկի մոտ հայտնաբերվեց կռփազենք եւ 16 փաթեթ, որոնցից հինգում մեթամֆետամին թմրամիջոցի նմանվող զանգված էր, 11-ում՝ մարիխուանայի: Մեքենայի զննությամբ էլ հայտնաբերվեց մեթամֆետամին թմրամիջոցի նմանվող զանգված եւ ծալովի դանակ:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Գաղտնիք չէ, որ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների ծառայողները պարբերաբար այցելում են ոստիկանությունում հաշվառված անձանց բնակության վայրեր եւ անցկացնում պրոֆիլակտիկ բնույթի միջոցառումներ:

Հուլիսի 12-ին ոստիկանության Աշտարակի բաժնի համայնքային ոստիկանները այցելեցին Աշտարակ քաղաքում բնակվող եւ ոստիկանությունում որպես թմրամոլ հաշվառված 36-ամյա մի տղամարդու տուն՝ պրոֆիլակտիկ զրույց անցկացնելու: Սակայն բանը զրույցին չհասավ: Ցանկապատից այն կողմ ոստիկանները հայտնաբերեցին կանեփի թփեր:

Հայտնաբերված 71 թփերն արմատախիլ են արվել եւ ուղարկվել փորձաքննության:

Կատարվում է քննություն:

Գողության փորձը ձախողվեց

Հուլիսի 2-ին ոստիկանության Բագումի բաժնի քրեական հետախույզները օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ հուլիսի 1-ի գիշերը Սպիտակ քաղաքի Այգեստանի փողոցի մի բնակիչ փորձել է գողություն անել Աբեղյան փողոցի մի առանձնատնից, սակայն հանցագործությունն ավարտին չի հասցրել:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ 35-ամյա տղամարդը բերման ենթարկվեց: Նաեւ հրավիրվեց տանտերը եւ հաղորդում տվեց, որ իր տան լոգարանում նկատել է գողության նպատակով բնակարան մտած մի անծանոթի՝ ձեռքին լապտեր ու տոպրակ: Տանտերն անծանոթին հրելով՝ դուրս էր հանել պատշգամբ, որտեղից էլ նրան հաջողվել էր փախչել:

Նախապատրաստվում են նյութեր:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Թմրանյութ՝ խաղալիքի մեջ

Հուլիսի 11-ին ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության, Արարատի մարզային վարչության եւ Արտաշատի բաժնի ծառայողների համատեղ միջոցառումների շնորհիվ ոստիկանություն բերման ենթարկվեցին 66-ամյա մի կին եւ 40-ամյա մի տղամարդ:

Անձնական խուզարկությամբ տղամարդու մոտ հայտնաբերվեց փափուկ խաղալիք, որի մեջ երեք դեղապատիճ էր: Ըստ նրա՝ հայտնաբերվածը մեթադոն տեսակի թմրամիջոց է, որն իր համար կինն էր 66-ամյա մորաքրոջ անվամբ արտերկրից փոստով ուղարկել:

Դեպքի առթիվ նյութեր են նախապատրաստվում:

Հայտնաբերվել են հետախուզվողներ

Ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզները, իրացնելով օպերատիվ տվյալները, հուլիսի 14-ին Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանավակայանի ժամանման սրահից բերման են ենթարկել Հնդկաստանի Հանրապետության 34-ամյա քաղաքացի Ռանդիպ Կ.-ին, որը մայիսի 10-ից ոստիկանության Շենգավիթի բաժնի կողմից հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 324 հոդվածի (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելը կամ վնասելը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Հրազդանի բաժնի համայնքային ոստիկանների ձեռնարկած միջոցառումների եւ բացատրական աշխատանքների շնորհիվ հուլիսի 14-ին Սանկտ Պետերբուրգ-Երեւան չվերթով Հայաստան է վերադարձել 2017 թ. օգոստոսից ՀՀ քրեական օրենսգրքի 333 հոդվածի (սուտ մատնությունը) մեղադրանքով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կատարումից խուսափելու համար հետախուզման մեջ գտնվող 34-ամյա Արսեն Մ.-ն, որը օդանավակայանից տեղափոխվել է ոստիկանության Հրազդանի բաժին:

◆

Ոստիկանության ՔՀԳ վարչության, Լոռու մարզային վարչության եւ Ստեփանավանի բաժնի ծառայողների օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հուլիսի 12-ին «Զվարթնոց» օդանավակայանում հայտնաբերվել է ՌԴ իրավապահ մարմինների կողմից արտաքսված, Վարդաբլուր գյուղի 34-ամյա մի բնակիչ: Նա 2015 թ. օգոստոսից հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 179, 183 եւ 242 հոդվածների մեղադրանքներով:

◆

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողները, իրացնելով օպերատիվ տեղեկությունները, հուլիսի 12-ին Երեւան քաղաքի Բաղրամյան պողոտայից բերման են ենթարկել Ստեփանակերտի 37-ամյա մի բնակչի, որը Արցախի Հանրապետության ոստիկանության կողմից հետախուզվում էր խարդախության մեղադրանքով:

◆

Հուլիսի 11-ին ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ Երեւան-Մոսկվա ինքնաթիռի չվերթի հաշվառումից հետո բերման է ենթարկվել ՌԴ քաղաքացի Անդրեյ Ավրամուկը, որը 2018 թ. նոյեմբերից հետախուզվում էր ՌԴ իրավապահների կողմից՝ դիտավորյալ ծանր մարմնական վնասվածք հասցնելու մեղադրանքով:

◆

Ոստիկանության Չարենցավանի քրեական հետախույզների բացատրական աշխատանքների շնորհիվ հուլիսի 11-ին Մոսկվա-Երեւան չվերթով Հայաստան է ժամանել 48-ամյա Համլետ Գ.-ն, որը ոստիկանության Կենտրոնական բաժնի կողմից հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 179 հոդվածի (յուրացնելը կամ վատնելը) մեղադրանքով:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Անհոտ, անգույն գազ
Ղեկավար մարմին
Ծաղկա-ման
Թելատու բույս
Այծքաղ / Շինա-նյութ
«Հայկ եւ ...» / Նահանգ, Մեծ Հայք
Թշնամուց խլված զենք, իր
Շտեմա-րան / Մատուռ
Գերման. ֆիզիկոս, Նոբելյան դափ.
Գերմա-նացի գրող եղ-բայրներ
Պարան / Ռուս մարտան-կարիչ
Արշալույս / Հրաբխա-յին ապար
Միջնադարի կալվածք / «Դանուբի ալիքները»
Հայ պատմա-գիր
Հոլով
Կենդանու բույն
Սավանա / Գետ, Աֆրիկա
Տուֆ / Կարգ ու ...
Կիբեռնե-տիկա
Կիսա-թանկար-ժեք քար
Հյուսնի գործիք
Ռազմա-նավ
Շաբաթ-վա օր
Կուբա
Ընտանի կենդանի
Բամակո
Կամպա-լա
Երկնային ...
Եթովպ. կայսրեր / ... Ֆորդ
... Խան-զադյան
Դեղամի-ջոց
... Բաբա-խանյան (Լեռ)
«Քրիստո-սի հայտ-նությունը ժողովր-դին»
Ֆրանս. երգահան / Թաղամաս, Երեւան
Պելեի խաղըն-կերը
Մեծ իշխան, Հին Հայ. / Կիբորգ
Լեռ, ՀՀ / Ալեք-սանդր ...
... Գոգ
Լեհական քաղաք / Անվանում
... Ռավել / Կրոնա-վոր
Մերիմե, Ցվայգ / Կիկլոպնե-րի հայրը
Նոտա / Բանգլա-դեշ
Երաժշտ. մետր / Բաժանմուն-քի պետ
Լարավոր նվագա-րան
Օրգանա-կան նյութ, հայտածիչ
Թթվածնի տարա-տեսակ
Համաստե-ղություն
Ավտոմո-տոմր-ցումներ
Կողով / Արաքս գետը հնում
Գամ
Լողացող թռչուն
Անգլիացի գրող
Նյութի վիճակ
Փոխադ-րամիջոց
«... եւ խարդա-վանք»
Մութ
Արհես-տական քարային նյութ
Ռաֆայել ... / Երազանք
Հաց
Միխայիլ ...
Ռե, մի / Ռոլան ... / Բռնակ
Մոնթե
Արտա-շատ, Կարս
Նար - ...
Հաղթա-նակի աստվա-ծուհի
Մահվան աստված / Ձախ
Անձնա-կան դե-րանուն
Թեհրան-ցի պար-ոն
Կովկաս-յան հին ցեղ
Կառույց-հուշար-ձան
Արեւա-դարձ. միրգ
«Ժիգու-լի»
Իտալ. քանդա-կագործ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ապրագուշակ

19.07 - 25.07

Խոյ - Ակնկալիքների, անորոշության եւ մեծ կախվածության շրջան է: Շրջապատի կողմից՝ բարյացկամ վերաբերմունք:

Ցուլ - Նոր գաղափարների իրականացման շաբաթ է:

Երկվորյակ - Հանդիպումներ կարեւոր մարդկանց հետ: Դրամական գործերի հաջող ընթացք:

Խեցգետին - Ավարտվում է բարդ եւ անկայուն շրջանը, սկսվում է ինքնավստահության փուլը: Հետաքրքրություն հատկապես արտասահմանյան կրթության հանդեպ:

Առյուծ - Հանդիպումներ ազդեցիկ մարդկանց հետ: Ավելորդ ինքնավստահությունը խնդիրներ կառաջացնի աշխատանքում:

Կույս - Սեփական կամքը ուրիշներին պարտադրելու փորձերը կարող են կոնֆլիկտ առաջացնել: Խանդի տեսարաններ:

Կշեռք - Բանակցությունների, գործարքների հաջող ընթացք: Հնարավոր են կոնֆլիկտներ ընտանիքում:

Կարիճ - Խնդիրներ աշխատանքում՝ կապված անուշադրության կամ անզսպվածության հետ: Ոչ կառուցողական հանդիպումներ:

Աղեղնավոր - Հաջողություններ բիզնեսում: Մեծ ինքնավստահությունը կարող է խնդիրներ առաջացնել դրամական գործերում:

Այծեղջյուր - Գեղեցիկ իրերի ձեռքբերում: Խնդիրներ՝ ագրեսիվ, իմպուլսիվ, անհաշվենկատ վարքագծի պատճառով:

Ջրհոս - Ներդաշնակ, ռոմանտիկ, գործնական կապեր: Անօգուտ ակտիվություն ծանոթությունների եւ հանդիպումների ժամանակ:

Ձուկ - Անսպասելի ծախսեր: Բիզնեսում հնարավոր է կորուստներ լինեն:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.g3-h4 d6:d2 2. h4:e1x

Խնդիր N2 1.f6-g7 f8:f4 2. b4-c5 d4:b6 3. a5:e1x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու
Հայաստանի չեմպիոն,
IDF վարպետ,
սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 18.07.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: